

ՀՏԴ 82-9Հայ գրականություն

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, ք. գ. թ.

E-mail: nare-luys@mail.ru

**ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԴՐԱՄԱՆ ՎԱՀԵ
ՀԱՅԿԻ «ՀԱՅՐԵՆԻ ԾԽԱՆ»
ՀԻՆԳՀԱՏՈՐՅԱԿՈՒՄ**

Վ. Հայկի «Հայրենի ծխան» գրքի հինգ հատորներն էլ գրված են բարձր արվեստով, կարոտի ու անամոք թախծի խորունկ ապրումներով, որոնց մեջ գեղարվեստական տեքստի մտահղացման նախահիմքը գերազանցապես ոչ թե վիպական պատմությունն է, այլ քնարական զգացմունքը, իսկ եթե առկա էլ է վիպական բաղադրիչ, ապա հիմնականում արտահայտված է վերապրումի միջոցով: Իր ստեղծագործության մեջ Վահե Հայկը համադրեց բանաստեղծական մտածողությունն ու իրապաշտական վիպականությունը, հոգեբանական ներթափանցումն ու իմացական դատողականությունը, գեղարվեստի ազգային առանձնահատկություններն ու եվրոպական չափանիշները: Հոգեբանական նուրբ ու խորունկ վերլուծությունները, կենսաիմացական բարձր մակարդակն ու պատկերակերտման ինքնատիպ արվեստը Վահե Հայկի արձակի գեղարվեստական տարածությունը դարձնում են գրական նոր ու իսկատիպ աշխարհ՝ ուղեծիր նշմարող յուրահատկություններով: Մի կողմից Վահե Հայկը բարձր ներշնչանքով ստեղծում է հայրենի եզերքի գեղարվեստական պատկերը, վիպական հստակ ոճով ներկայացնում ցեղասպանության ու բռնազաղթի որոշակի դրվագներ, մյուս կողմից՝ կերպավորում տարագիր հայությանը՝ սոցիալ-հոգեբանական խնդիրներով, դրամատիկ իրավիճակներով, որոնք երբեմն առաջ են գալիս տոհմիկ ու նոր սերունդների հոգեբանական հեռացումից և օտար բարքերի ներազդեցությունից:

Բանալի բառեր՝ կարոտացավի ծուխ, բարձր ներշնչանք, վերապրում, հոգևոր ու կենսաբանական կապ, բնապատկերայնություն, հոգեվերլուծություն, տարագիր հայություն, հոգեբանական հեռացում, օտար բարբերի ներազդեցություն:

Н. Ованесян

**ДРАМА НАЦИОНАЛЬНОЙ СУДЬБЫ В ПЯТИТОМНИКЕ
ВАГЕ АЙКА «РОДНОЙ ДЫМ»**

Все пять томов книги В. Айка «Родной дым» написаны с высоким искусством, глубоким чувством тоски и неумолимой грусти, в которых на основе художественного текста лежит не вымышленный рассказ, а лирическое чувство, и наличие вымышленной составляющей, в основном выражается через выживаемость. В своем творчестве Ваге Айк сочетал поэтическое мышление и реалистический вымысел, психологическую проницательность и когнитивное суждение, национальные особенности искусства и европейские стандарты. Тонкий и глубокий психологический анализ, высокий уровень биопознания и уникальное искусство изображения делают художественную прозу Ваге Айка новым и подлинным литературным миром с отличительными особенностями.

С одной стороны, Ваге Айк с высоким вдохновением создает художественный образ родного края, представляет отдельные эпизоды геноцида и депортации в четком эпическом стиле, с другой стороны, изображает депортированных армян с социально-психологическими проблемами, драматическими ситуациями, которые порой возникают от психологического удаления родов и новых поколений и от влияния чужих нравов.

Ключевые слова: ностальгический дым, высокое вдохновение, выживание, духовная и биологическая связь, пейзаж, психоанализ, депортированные армяне, психологическое удаление, влияние чужих нравов.

N. Hovhannisyan

**THE DRAMA OF NATIONAL DESTINY IN THE VAHE
HAYK'S FIVE-VOLUME "NATIVE SMOKE"**

All five volumes of V. Haik's book "Native Smoke" are written with high art, a deep sense of longing and inexorable sadness, in which the literary text is based not on a fictional story, but on a lyrical feeling, and the presence of a fictional component is mainly expressed through survival. In his work, Vahe Hayk combined poetic thinking and realistic fiction, psychological insight and cognitive judgment, national peculiarities of art and European standards. Subtle and deep psychological analysis, a high level of bio-knowledge and the unique art of the image make the artistic prose of Vahe Hayk a new and authentic literary world with distinctive features.

On the one hand, Vahe Hayk creates an artistic image of his native land with high inspiration, presents individual episodes of genocide and deportation in a clear epic style, on the other hand, depicts deported

Armenians with socio-psychological problems, dramatic situations that sometimes arise from the psychological removal of childbirth and new generations and the influence of other people's morals.

Key words: *nostalgic smoke, high inspiration, survival, spiritual and biological connection, landscape, psychoanalysis, deported Armenians, psychological removal, the influence of other people's morals.*

1930-1970 թթ. Սփյուռքում լույս տեսան Վահե Հայկի «Հայրենի ծխան» պատմվածքների ժողովածուի հինգ հատորները: «Հայրենի ծխան» գրքի առաջին հատորի առթիվ Վահե Հայկին հղած նամակում Հակոբ Օշականը գրում է. «...Լաւագոյն տպաւորութիւն մը պահած եմ, ջերմ, հաղորդական արձակ մըն է ձերինը այդ էջերուն մէջ, նրբացած եւ մշակուած, ինքնատպութեան զորաւոր ցոլքերով եւ բանաստեղծական հարուստ աւիշով»¹: «Հայրենի ծխանը» որպէս սփյուռքահայ արձակի նոր հայտնություն, գրաքննադատական անմիջական արձագանքների է արժանանում համահայկական տիրույթում՝ ի հայտ բերելով գրողի ստեղծագործական անհատականությունն ու նորարարությունը. «...Անոնց ընթերցումը ինծի բերաւ ինքնատիպ եւ թարմ տաղանդի մը յայտնութիւնը, տաղանդի մը որ գտած է իր ուրոյն գոյնն ու յատուկ ոճը: Դուք այս գործով կը միանաք Խարբերդի մեծ գրագէտներուն, որոնց գործն է որ կը շարունակէք»², - նկատում է Արշակ Զոպանյանը:

Իր ստեղծագործության մեջ Վահե Հայկը համադրեց բանաստեղծական մտածողությունն ու իրապաշտական վիպականությունը, հոգեբանական ներթափանցումն ու իմացական դատողականությունը, գեղարվեստի ազգային առանձնահատկություններն ու եվրոպական չափանիշները: Հոգեբանական նուրբ ու խորունկ վերլուծությունները, նշանակետային դատողությունները, կենսաիմացական բարձր մակարդակն ու պատկերակերտման ինքնատիպ արվեստը Վահե Հայկի արձակի գեղարվեստական տարածությունը դարձնում են գրական նոր ու իսկատիպ աշխարհ՝ ուղեծիր նշմարող յուրահատկություններով: Մի կողմից Վահե Հայկը բարձր ներշնչանքով ստեղծում է հայրենի եզերքի գեղարվեստական պատկերը, վիպական հստակ ոճով ներկայացնում ցեղասպանության ու բռնագաղթի որոշակի դրվագներ, մյուս կողմից՝ կերպավորում տարագիր հայությանը՝ սոցիալ-հոգեբանական խնդիրներով, դրամատիկ իրավիճակներով, որոնք երբեմն առաջ են գալիս տոհմիկ ու նոր սերունդների հոգեբանական հեռացումից և օտար բարքերի ներագդեցությունից:

«Հայրենի ծխան» գրքի հինգ հատորներն էլ գրված են բարձր արվեստով, կարոտի ու անամոք թախծի խորունկ ապրումներով, որոնց մեջ

¹ **Հայկ Վ.**, *Հայրենի ծխան*, հ. Ա., Ֆրեզնո, 1930, էջ 5:

² *Նույն տեղում:*

գեղարվեստական տեքստի մտահղացման նախահիմքը գերազանցապես ոչ թե վիպական պատմությունն է, այլ քնարական զգացմունքը, իսկ եթե առկա էլ է վիպական բաղադրիչ, ապա հիմնականում արտահայտված է վերապրումի միջոցով: Սա ինքնին ենթադրում է նաև պատումի ենթակայական բնույթ, հեղինակի ներկայություն, ինչը հատկանշական է մանավանդ ամերիկահայ կյանքն արտացոլող պատմվածքներին և հայրենի երկիրը կերպավորող քնարական պատումներին:

Հայրենի ծխանը Վահե Հայկի գրական աշխարհում շարունակում է ծխալ, բայց դա արդեն կարոտի ու ցավի ծուխ է, քանի որ իրականության մեջ մարած է ծննդավայրի ծուխ ծխանին: Կորսված է այլևս հայրենի երկիրը, բայց անկորնչելի է նրա հոգևոր պատկերը: Իրական հայրենիքը փոխակերպվում է հոգևոր հայրենիքի, դառնում կյանքի հենակետ ու ոգու միջնաբերդ ամերիկյան աշխարհում:

Գեղարվեստական նուրբ ու խորահույզ պատկերով է բացվում «Հայրենի ծխանի» առաջին գիրքը՝ «Այգին ու այգեկութը»: Պատկերակերտման արվեստով և վերհուշի քնարական եղանակով այն ամբողջովին թողնում է բանաստեղծական արձակի տպավորություն: Այգին կորսված հայրենի եզերքի մի պատկերն է՝ հիշողության մեջ ապրող, փթթող ու հասնող կյանքով: Այգեկութի գունագեղ ու խնդապատկեր նկարագրության մեջ բնաբուխ ու տաք կարոտ կա, որ խոսքին հաղորդում է էլեգիական թախիծ: Այգեկութի պատկերը անդրադարձնում է նաև տոհմիկ արևմտահայ կենցաղի ու արարումի մշակույթը. «Հնուց մնացեր էր մեր այգին, բամպակ մագերով մամիկի մը պէս որ աղօթքի նմանող աղուոր խօսքեր կ'ունենայ շրթունքներուն վրայ եւ գրպանին մէջ անոյշ բաներ անպակաս»:

Հայրս չէր յիշեր անոր պատմութիւնը: Մեր պապերը եկեր անցեր էին անոր վրայէն, տղու մը պէս խաղցեր՝ անոր հետ, փորեր էին հողը, խնամեր էին գայն, մանկական աղապատանքով գուրգուրացեր էին անոր վրայ, ջուրի տեղ խմեր էին անոր գինին, հոն վառեր իրենց սերն ու երիտասարդութիւնը եւ նո՛յն այդ հողերուն վրայ կքելով իրենց շինականի առոյգ հասակը, օր մըն ալ թողուցեր ամէ՛ն բան....»¹ («Այգին ու այգեկութը»):

Խորունկ, բայց զուսպ զգացմունքայնությունն ու բանաստեղծական մտածողությունը Վ. Հայկի կարոտի արձակի բևեռներն են: Իրական տպավորությունները, իրական հուշերը գրողի պատմվածքներում դառնում են քնարական վերհուշ: Վ. Հայկի արձակը բանաստեղծական է ոչ միայն պատկերային համակարգով, այլև զգացական-իմաստային խտացումներով. «Այգեկութի օրեր, ուր Աստուածածինն ալ կուգար, օրհնութիւն կը թափէր դաշտերուն ու ճամբաներուն վրայ. այգին կը քաղցրանար ու կը ծանրանար, իր հասունութեան ամենէն հեշտագին ու տարփահրաւէր օրերուն կը հասներ»:

¹ Նույն տեղում, էջ 7:

Ու կը կրէին այգի՛ն, կը քաղէին թուփերուն կաթը, մանուկի մը պէս որ դեռատի ծիծի մը փակած կը ծծէ....

Մենք բոլորիկ ոտքերով լաճեր, տեսնէիք մեզ, խաղողի լեփլեցուն կողովներ մեր գլխուն, երբ կը վազէինք իրարու ետեւէն հեւիհեւ ու խնդապատառ: Շուտով հասաւանին վրայ ճերմակ ու սեւ ողկոյզներու խայտաբղետ բլրակ մը կը բարձրացնէինք, ապա ուռիի ճիւղերով հիւստած գլանաձէ կողովներու մէջ կը լեցնէինք ու բարի աչքերով էշերուն բեռցած կը տանէինք տուն»¹:

Մի կողմից Վահէ Հայկը բարձր ներշնչանքով ու գեղարվեստական ինքնատեսակ ոճով վերստեղծում է հայրենի եզերքի առարկայական ու ոգեղեն պատկերը, մյուս կողմից՝ հեռագայությամբ նկարագրում խաթարված ու կորսված երկիրը. «Հիմա լքուած է ան, մեր այգին, ինչպէս բոլոր այգիները, գարունն ալ աշունն ալ այրի ու խոպան: Ոչ ծերունիի մը քրտինքը կը բեղմնաւորէ զայն եւ ո՛չ ալ մանկական աղաղակ մը կենդանութիւն կը թափէ հոն....

Անոնք չկան ա՛լ, այգին ալ չկայ, իմ սիրտս միայն մնաց այդ օրերէն եւ հոգիներէն փթթած փշրանքի մը պէս որ արցունքով կը կանչէ այգին, մանկութիւնը ու անոնց կապուած հեքիաթները»²:

Վահէ Հայկը, ինչպէս կարոտի գրականության մյուս գրողները, բոլոր երակներով կապված է հայրենական հողին: Դա ն՝ զգացական-հոգեկան կապ է, ն՝ կենսաբանական-արյունակցական: Եվ այդ ոգեղեն ու կենսաբանական կապն այնքան ուժգին է, որ հասնում է հեռագացության: Կարոտը, թախիժն ու հայրենի երկրի վերագտնման ու վերակենդանացման բաղձանքը փոխլրացնում են իրար Հայկի պատմվածքներում. «Հին լեռներուն ցնծագին ձիւնը փշրէի մեր երդիքներուն. գիշերն երկարէի մեր գինիի սեղաններուն վրայ, փարջեր գլգլային մեր կուրծքերն իր վար, կապանքը քակւէր, ծանրութիւնը փետուր մը դառնար, վիշտը փշրուէր մեր ձեռքերուն մէջ ձիւնէ գնդակի մը պէս....

Տայի ր ինծի, ի՛նչ կըլլար, տայիր ինծի իմ ծաղկուն պատմութեանիս եւ կարմրով կոշիկներուս օրերը, եւ կամ հին, օրհնուած սեղանէդ գաւաթ մը գինի որ զիս մանկացնէր պահիկ մը միայն....»³ («Սրբոյն Յակոբայ»):

Վահէ Հայկի կարոտի արձակում ներքին մենախոսությունը կամ լուռ հաղորդակցումը հայրենիքի հետ երկրորդական գծում են թողնում վիպական հետևողական շարադրանքը՝ այդ առումով ևս դրսևորելով քնարական արձակի հատկություններ: Հայրենի եզերքի կորսված գեղապատկերի հետ գրողի կարոտի պատմվածքներում մշտադառն է ցեղասպանության և բռնազաղթի վերապրումը: Քնարական մեղմ շնչով ու ողբերգականությամբ առանձնանում են «Ո՛ւր գացիր, Վարպե՛տ», «Իմ գարունս, իմ սէրս» պատմվածքները. «Ո՛ւր գացիր, Վարպե՛տ, ո՞ր ճամբաներէն անցար, ո՞ր քարերուն ու ծառերուն ըսիր

¹ Նույն տեղում, էջ 13:

² Նույն տեղում, էջ 14, 15:

³ Նույն տեղում, էջ 42:

վերջին խոսքը, ո՞ր հորիզոնին նայեցար վերջին անգամ, մօտեցա՞ր արդեօք Մայրենի Հողիդ՝ որուն Երազը պաշտեցիր որպէս Աստուած եւ ծնրադրեցիր անոր դաբիրներուն իբրեւ քուրմ եւ իբրեւ յաւիտենական ուխտաւոր....

Լսեցի՞ր հայրենի հովերուն ու գետերուն ալիքները որ հազար հազար կոյսերուն ու մանկիկներուն աղաղակները շալկած՝ եկան այրելու, ա՛խ, բիր անգամ խոցոտ օրհասականի ականջներդ....»¹ («Ո՞ւր գացիր, Վարպետ»):

Հիշողությունը Վահե Հայկի կարոտի արձակում դառնում է հոգեբանական ներքին հաղորդակցություն հայրենի երկրի հիշատակների հետ, դառնում է մտերմության ձև ու կենսակերպ. «Բոլոր սիրտերը իրենց ճառագայթներուն գերեզման եղան.... Հիմա ծովեր ու լեռներ կը բաժնեն զիս մեր դաշտերէն, սիրական բլուրներէն, ուր ապրեցայ տարիներ, Կուժկոյրուկ ու Բամբոս փնտռելով, թիթեռնիկներ հալածելով ժպտագին, ու աւելի ետք՝ սէրերուս ետեւէն վազելով հեւ ի հեւ.... Անոնց յիշատակը իմ միակ մտերմութիւնն է. անոնց հետ եմ ամէն օր....»² («Իմ գարունս, իմ սէրս»):

Պատումի նրբագիծ անցումներով Վահե Հայկը գեղարվեստականորեն ի մի է բերում հայրենի բնաշխարհի պատկերն ու ժողովրդի ճակատագրի ողբերգականությունը:

Վահե Հայկի արձակում հայրենի ծխանի ծուխը շարունակվում է ոչ միայն բնապատկերներում ու կենսապատկերներում, այլև մարդկանց հոգիներում: Բնապատկերայնությունն աստիճանաբար իր տեղը զիջում է մարդկային հոգեբանության պատումին՝ բացահայտելով հայրենագրկված ու տարագրության դատապարտված հայության մնացորդաց սերնդի ներքին դրաման: Այդ մարդկանց հոգում անթեղված կարոտի կրակը բռնկվում է յուրաքանչյուր ազդակից, վերստին բացում հիշողության մինչև վերջ չսպիացած վերքը: Ֆիզիկապես օտար երկրում՝ նրանք հոգեպես անհաղորդ են շրջապատին, ապավինում են մենությանը, իրենց կորսված հոգևոր կյանքը վերագտնում հայրենական հիշատակների հանդիպադրվելիս. «Ծերունին կուլայ մանկական արցունքներով: Բնագաւառի ամենէն անոյշ հիշատակներուն բոյրովը օժտուած հայկական բարբառը անոր ականջներուն մէջ կ'իյնայ անիմանալի սրբութեան մը պէս, հո՛ւ, օտա՛ր եւ ցուրտ բարձրագաւառի մը ծերպերուն մէջ կորսուած տնակի մը կտուրին տակ, ուր հայրենի ծիծեռանկի մը թենն ու փետուրը, անոր հովերէն փոքրիկ շունչ մը անգամ երեւակայել անհնարին երազ մը պիտի ըլլար»³ («Հայր»):

Օտարության մեջ տասնյակ տարիներ լռամփոփ ապրած ծերունու համար բախտի իսկական անակնկալ է իր տան մեջ պատահական հայի հյուրընկալումը, և ներսում զսպված, խտացված հույզերն ու մտովի վերապրված

¹ Նույն տեղում, էջ 53:

² Նույն տեղում, էջ 64:

³ Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. Գ., Բոստոն, 1947, էջ 50:

հիշողությունները ճեղք են տալիս՝ շարժանկարի պես երևակելով անցյալը, որ նրա ներքին կյանքն է. «Ծերունին տակաւին խորասուզուած է: Ամբողջ անցեալի մը ժապաւենը կը քակուի իր փոքրիկ ուղեղի պաստառին վրայէն եւ ինք անոր միակ հանդիսատեսը կ'անցնի տեսարանը տեսարան, առանց անոնց վերջաւորութիւնը գտնել կարենալու....

Թերեւս *հայու կարօտն* է որ անոր յոգնած մարմնոյն մէջ կը խլրտի, հնամաշ մկաններն ու ոսկորները կը պրկէ, սրտէն բոցեր արձակել կուտայ, չարչարագին խաչելութեան մը վաղորդայնին՝ յարութիւն մը տեսնելու ըղձանքով առլցուն»¹:

Տարագիր հայի հոգեբանության տիպավորումը Վ. Հայկի ստեղծագործության հիմնագծերից է: Գրողը պատկերում է կարոտախտի ներհոգեկան բնեղացումներով կամ ընկճախտով տառապող հերոսների, որոնցից է նաև Գաբ Ամուն՝ «Հողի սեր» պատմվածքում. «ԳԱԲ ԱՄՈՒՆ կուլար: - Ինչո՞ւ կուլաս Գաբ Ամու: Ծերունին չի պատասխաներ, խոսելու ճիգ մը կ'ընէ բայց որոշապես բան մը կ'արգիլէ զինք: Լացը պուկն է կպեր եւ չի թողուր որ բառերը սովորական օրերու նման դուրս գան ազատ ու անկաշկանդ եւ իր ներսի դին լեցուած յուզումն ու զգացումները պարպեն....

Հեռաւոր Հայաստանէն Հայ զինուորական մըն է եկեր Ամերիկա....»² («Հողի սեր»):

Վահե Հայկը հրաշալի նկարագրող է: Հոգեբան գրողը փոքր կտավի վրա ներկայացնում է մարդկային դրամատիկ պատմություններ, ստեղծում ամբողջական կերպարներ: Գաբ Ամուն յոթանասունն անց գաղթական ծերունի է: Ամերիկյան կյանքը չի կարողացել նրա մեջ սպանել «յամառ հայը». «Օտարօտի գաւակներ ժնցնելու վախէն՝ տուն տեղ չէր եղեր, ազգականներու շուքերուն տակ ալ չէր ուզեր վայրկեան մը նստիլ եւ ո՛չ ալ օտարի մը ձեռք երկարել: Ինք բաներ ու ինք կերեր էր: Գործարաններուն մէջ կամ այգեստանին վրայ քամեր էր իր կեանքը, ծերութեան օրերուն, ըսես, մարմինը օտար գերեզմաններու մէջ փտտեցնելու վախէն սարսափահար՝ մահուան նայեր էր խոժոռ աչքերով, ամէն օր սպասեր էր որ հայրենի հողերուն վերադառնայ ինք եւ անոր որպէս հարազատ մէկ բրդոնը խառնուի եւ նոյնանայ պապենական հողերուն....»³: Հայաստանից Ամերիկա եկած հայ զինվորականի ներկայությունը, ապա նրա հետ մի քանի խոսք փոխանակելը խորհրդավոր գործություն է հաղորդում Գաբ Ամուի ծերացած մարմնին՝ կերպավորելով նաև հոգին. «Հայրենի հողը, ինչքան ալ հեռի իրմէն, եկեր նոյնացեր էր իր էութեան: Ինք անոր մէջն էր ա՛լ եւ Ան՝ իր մեջ....»⁴:

Աքսորական հայի տիպական կերպար է նաև Վարդանը՝ «Առ մահիճդ ու քալէ» պատմվածքի հերոսը: Վահե Հայկի տաղանդը փայլում է ն՝

¹ Նույն տեղում, էջ 51:

² **Հայկ Վ.**, *Հայրենի ծխան, հ. Դ.*, Նյու Յորք, 1954, էջ 135:

³ Նույն տեղում, էջ 136-137:

⁴ Նույն տեղում, էջ 138:

հոգեվերլուծական, և՛ նկարագրական, և՛ պատմողական արվեստում: Այստեղ տարագիր հայի կյանքն է՝ սոցիալ-հոգեբանական խնդիրներով, գոյաբանական մաքառումներով, հայրենի եզերքի երազներով ու նաև՝ ցեղասպանության և բռնագաղթի մտալուկ հիշողություններով. «Օերունի հայր, մայր, կայտառ, բանուոր եղբայրներ, կարմիր երեսներով ամօթխած քոյրեր՝ ուրիշ հազարներու հետ քշուեր, տարուեր էին: Տարիներէ ի վեր անոնցմէ խապրիկ մը չկար, շշունջ մը չէր լսուեր:

Միայն իր կինն ու երեք զաւակներէն ամենէն փոքրը կրցեր էին սակաւաթիւ բախտաւորներու հետ կեանքի նեղ եւ փշաթել շրջապատին մէջ մնալ եւ անանուն տանջանքներ ապրելէ, բոլորիկ, կիսամերկ՝ հազարաւոր մղոն քալելէ յետոյ զալ եւ իյնալ բարեսիրտ երկրի մը նաւահանգիստը, Փաթրաս»¹ («Առ մահիճդ ու քալէ»):

Վարդանի հիշողությունները, մտածումները, երազանքները գամված են հայրենի գյուղին, կորուսյալ կամ անհայտ հարազատներին: Տարիներով գործատանը և այգեստանում ծանր աշխատանքներ կատարելով՝ Վարդանը գումար է կուտակում՝ բռնագաղթից հետո Հունաստանում հայտնված կնոջն ու զավակին իր մոտ՝ Ամերիկա բերելու, բայց «Ամերիկայի մէջ անսիրտ օրէնք մը կար», որ «անգիտակցօրէն բարբարոսին կը գործակցեր եւ թոյլ չէր տար որ բռնութեամբ իրարմէ զատուած ընտանիքի մը անդամները կրկին քով քովի գային»²: Վարդանը վատնում է տարիներ ի վեր վաստակած ամբողջ գումարը, մեկը մյուսի հետևից աղերսագրեր գրում, բացատրում ցեղասպանություն, բռնագաղթ, հարազատների կորուստ, բայց ամերիկյան օրէնքը բացառություն չի ճանաչում: Գրողը ամերիկյան միջավայրի և Վարդանի հիմնախնդրի հանգույցը լուծում է մարդասիրական գաղափարով: Վարդանին պատուհասած ծանր փորձությունը (աշխատանքի պահին վթարվում է տրակտորը, և նա ստանում է կոտորվածքներ) իսկական բարեբախտություն է դառնում նրա համար: Վարդանին բուժող ամերիկացի բժիշկը, լսելով նրա կյանքի պատմությունը, անակնկալ է անում Վարդանին՝ լուծելով ընտանիքին վերագտնելու խնդիրը:

Տարագիր հայության դրամատիկ ճակատագրերի պատկերներում Վահե Հայկը մի կողմից ներկայացնում է անցյալի հիշողությունների խուժումը և գոյաբանական դժվարությունները, մյուս կողմից ցույց տալիս արևմտահայ մնացորդաց սերնդի և նրանց զավակների՝ ամերիկահայ նոր սերնդի հոգեբանական անջրպետը: Այս առումով ուշագրավ են «Էսցեղ ճակտի գիր կ'ըլլի, Աստուած», «Կաթիղ փարան չի մոռնաս, մամա՛», «Վերը Աստուած կայ, Կարապէ՛տ» և այլ պատմվածքներ: Ամերիկյան միջավայրը ներագրում է նոր սերնդի հոգեբանության վրա, դարձնում հայ հոգուն անհարազատ: Նրանք անտարբերությամբ կառավարական նպաստի կամ տարեցների տան խնամքին

¹ **Հայկ Վ.**, *Հայրենի ծխան*, հ. Գ, էջ 187:

² *Նույն տեղում*, էջ 188:

են թողնում իրենց ծնողներին: «Կաթիլ փարան չմոռնա՛ս, մամա՛» պատմվածքում նպարավաճառ որդին զայրանում է՝ հանդիմանելով նպաստով մի կերպ ապրող ծեր մորը, որ ամբողջովին չի վճարում իր խանութից գնած նպարների դիմաց: Հոգեբանական տպավորիչ գույներով է գրողը նկարագրում հայ մամիկի կերպարը՝ բացահայտելով հին սերնդի ներքին դրաման:

«Վերը Աստուած կայ, Կարապե՛տ» պատմվածքում որդիները տարեցների խնամքի տուն են հանձնել իրենց ծեր հորը՝ մոռանալով նրա գոյության մասին: Վահե Հայկը հոգեբանական նուրբ վերլուծություններով ներկայացնում է հոր սպասումները, կարոտներն ու տազնապները, նրա հոգատարությունը հակադրում որդիների անտարբերությանը, ինչն այս պարագայում այլասերման, օտար բարքերից ստացական հատկանիշների ձեռքբերման յուրովի դրսևորում է:

«Էսցեղ ճակտի գիր կ'ըլլի, Աստուած» պատմվածքում սիրակարոտ մայրը, հազար ու մի դժվարություններ հաղթահարելով, գալիս է Ամերիկա՝ իր միակ որդուն տեսության: Հայ մամիկի ավանդական կերպարը ջերմությամբ է լցնում որդու՝ Արտաշեսի տունը, թոռնիկները հոգեպես կապվում են նրա հետ, յուրացնում ազգային հատկանիշներ: Այդ ամենին դիմադարձում է ամերիկյան կենսակերպով ապրող հարսը: Նա դժգոհում է, չի ուզում այլևս իրենց տանը տեսնել ամուսնու մորը, մի օր էլ հյուրերի ընդունելությունից առաջ նրան ուղարկում է կառատուն՝ ամաչելով մամիկի ներկայության համար: Ցուրտ կառատանը մնալով ամբողջ գիշեր՝ ծեր մայրը հիվանդանում է և մահանում:

Հարսի վատասերված, քաղքենի կերպարին պատմվածքում հակադրվում են որդին և թոռնիկները. «-«Հին»ին ներքին ոգին ազնիւ եւ բարձր է, տառապանքի եւ ամեն զրկանքի կուրծք կուտայ, ընտանիք եւ սերունդներ կ'ապրեցնէ անձնուիրութեամբ, առանց հաշիւի,- ասում է Արտաշեսը՝ ի պատասխան կնոջ դատումների: - «Նոր»ին արտաքինը միայն ջնարակուած է, փոքրիկ հովի մը անգամ չի դիմանար: «Հին»ը կը նայի սրտի՛ն, միջուկի՛ն, «Նոր»ը՝ կճեպին ու փոճոկին միայն»¹ («Էսցեղ ճակտի գիր կ'ըլլի, Աստուած»):

Վահե Հայկը խոր ցավով է պատկերում նոր սերնդի նահանջը ազգային հոգեբանությունից: Նրանք այլևս ամերիկացի են՝ կենսակերպով և մտածողությամբ:

Եթե ընդհանրության մեջ քննելու լինենք Վահե Հայկի ստեղծագործության պատմահոգեբանական նախահիմքերը, պիտի փաստենք, որ ցեղասպանությունը և հայրենիքի կորուստն են նրա արձակի նախադրյալը: Մի կողմից Վ. Հայկը խոր դիտողականությամբ ներկայացնում է մնացորդաց սերնդի՝ ցեղասպանության և պատմական հայրենիքի կորուստի դրամատիկ ու ողբերգական վերապրումները, անհայրենիք ճակատագրի դատապարտվածությունը, օտար միջավայրում կեցության հիմքեր գտնելու

¹ *Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. 2, էջ 183:*

մաքառումները, մյուս կողմից՝ գեղարվեստական բարձր ոճով շարադրում ցեղասպանության և բռնագաղթի որոշակի անմիջական դրվագներ, պատմություններ, վկայություններ: Այս առումով առանձնանշելի են «Ապառիկները», «Երկիր դրախտավայր», «Կարմիր կակաչներ», «Կայծ մը... եւ անապատի Ռուբենը», «Վանքն ու վանահայրը», «Պատանի Կարօն» և ուրիշ պատմվածքներ:

Փոքր կտավի վրա համապատկերայնության մակարդակի հասած պատմվածք է «Ապառիկները»: Վահե Հայկը ոչ միայն էմոցիոնալ խտացումների, պատմողական-նկարագրական ճշմարիտ արվեստի, այլև մանրապատկերի ու համապատկերի անմիջական հարաբերակցության վարպետ է:

Ցեղասպանության զոհ դարձած հայ փաստաբանի կինը դերձակուհու կերպարանքով, վտանգելով իրեն, մտնում է կոտորածի օրերին հայուհիներին բռնի կնության առած թուրքերի բնակարաններ՝ կազմակերպելու նրանց փախուստը: Հայ կնոջ անվեհեր կերպարի կողքին գրողը մանրակերտում է թուրքի կերպարը ցույց տալով նրա կենսաբանական հոգեբանությունը, հակամարդու հատկանիշները. «Սպաննել ծնո՛ղք, եղբայր, քո՛յր, ամուսին, զաւա՛կ, ազգակա՛ն եւ ազգակի՛ց, արեւին տակ այրել, մրրկել մնացողները, կաթիլ մը ջուրի համար արձակուած աղեկեզ պաղատանքն անգամ չլսել, անօթութեան կրակէ շապիկը հագցնել եւ ամենօրեայ խաչերով բռնաւորել արդէն անկրելի տառապանքը, ապա, կանանոցներու գնտանը նետել հայուհիները եւ ըսել որ «ամուսնացան իրենց կամքով եւ հաճութեամբ»...»¹ («Ապառիկները»):

Վահե Հայկի պատմվածքներում թուրք կինը ավելի վտանգավոր է ու ռիսկալ, քան նույնիսկ տղամարդը: Փաշայի մայրը, որ հայուհու ու նրա փոքրիկ զավակի կյանքը դժոխք է դարձրել, հարձակվում է դերձակուհու վրա «Հնագայլի մը պէս», գիշատիչ մագիլներով կատաղի մոլուցքով փորձում խեղդել նրան: Ապա դերձակուհուն հանձնում են թուրքական դատարան, ուր չարչարանքների ենթարկվելուց հետո նա աքսորվում է մահվան անապատներ: Բայց դերձակուհին չի ընկրկում: Զինադադարից հետո նա վերադառնում է քաղաք ամերիկացիների օժանդակությամբ գտնում և ազատում դեռատի հայուհուն ու նրա զավակին:

Խոր տպավորություն է գործում «Կարմիր կակաչներ» պատմվածքը՝ սիրտ կեղեքելու չափ ողբերգական ու ճնշող: Այստեղ գրողը ևս պատկերում է թուրք կնոջ գիշատիչ տեսակը, ով իր մաղձն ու կատաղությունը թափում է երկու անպաշտպան հայ որբերի վրա: Երեխաների հայրը սպանվել էր մինչև տարագրությունը, մայրը՝ մահացել, կոտորածներից ու բռնագաղթից ի վեր նրանք ապրում են գյուղի թուրք աղայի տան ախոռում՝ անասունների կողքին, վարժված կյանքի դառնություններին. «Բոլորն ալ, մանաւանդ երբ Աղան

¹ Վ. Հայկ, *Հայրենի ծխան*, հ. Գ, էջ 155:

բացակայ ըլլար, կը չարչարէին, կը տանջէին հայու փոքրիկները եւ անոնց ուժէն վեր ծառայութիւններու կը լծէին՝ տեսակ մը անգութ եւ չարասիրտ հրճուանքով»¹ («Կարմիր կակաչներ»):

Երբ մեռնում է աղայի հիվանդ որդին, երեխաների տառապանքն ու զրկանքներն ավելի են խորանում: Թրքուհին գիշատչի մոլուցքով հարձակվում է անմեղ երեխաների վրա միայն այն բանի համար, որ նրանք ողջ են, իսկ իր երեխան՝ մեռած: Սարսափահար, մատնված քաղցի՝ երեխաները ապրում են դողդողալով, հիվանդ, զառանցանքների մեջ, առանց չնչին ուշադրության: Ի վերջո, թրքուհին ատրճանակով սպանում է հայ որբերին՝ այդպէս հագեցնելով արյան ծարավը:

Վահե Հայկը անամոք ցավով է պատկերում ցեղասպանության և բռնագաղթի հետևանքով որբության դատապարտված հայ երեխաների ողբերգությունը: Ցնցող են այն դրվագները, որոնցում պատկերված են քույր և եղբոր հոգեկան սարսափներն ու տառապանքները, նույնիսկ նրանց մահվան պատկերն այնքան ճնշող չէ, որքան տառապալից կյանքի նկարագրությունը:

Հայ որբերի ճակատագրի թեման շարունակվում է նաև այլ պատմվածքներում: «Երկիր դրախտավայր» պատմվածքում փոքրիկ հերոսի Արսենի ճակատագրով զրոյդը ներկայացնում է արաբական անապատներում բարեսիրտ արաբների կողմից հայ երեխաներին իրենց պատահական խնամքի տակ վերցնելու և մահից փրկելու դրվագներից մեկը: Այլ դարձած գառնարած Արսենը ծանոթանում է իր նման որբ երկու հայ քույրերի հետ, ովքեր որբերի հավաքագրմամբ զբաղվող հայ գործիչներին հայտնում են նրա գտնվելու վայրը, և Արսենը ևս տեղափոխվում է հայկական որբանոց, ուր վերագտնում է իր կորուսյալ ինքնությունը: Ճակատագրական անակնկալները շարունակվում են, և տարիներ հետո, երբ Արսենը հայրենադարձվում է Խորհրդային Հայաստան, սիրահարվում է հայրենադարձ մի աղջկա, ով, պարզվում է, երկու քույրերից կրտսերն է: Վերածնված երկու հայ որբերի միավորումը խորհրդանշական իմաստ է ձեռք բերում. «Անոնց նահատակուած ծնողները, կը թուէր թէ հրեշտակներու թելերով սուրացեր եկեր էին հոն եւ կը փսփսային անպատում երջանկութեամբ, այսպէս, «-Փառք քեզ, Հայաստան, Երկիր դրախտավայր, հազար անգամ փառք քեզ... Հիմակ այլեւս մեր անթաղ ոսկորները կրնան հանգչիլ հեռաւոր ձորերու եւ անապատներու անանուն խորշերուն մէջ...»²:

Վահե Հայկի արձակին բնորոշ խոր ներագդեցությունը դրսևորվում է նաև ցեղասպանությունից և աքսորից հետո հայ որբերի հավաքագրման թեմայով գրված պատմվածքներում: Էմոցիոնալ ներգործությամբ առանձնանում է «Կայծ մը... եւ անապատի Ռուբէնը» պատմվածքը: Հայ մայրը իր երեքամյա տղայի հետ, տնական քաղցից ու ծարավից ուժասպառ, արնահոսող վերքով կտրում-

¹ *Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. Դ, էջ 129:*

² *Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. Դ, էջ 79:*

անցնում է անապատը՝ հասնելով արաբական գյուղ: Օրեր առաջ նա հազիվ էր փրկվել անապատի կոտորածից՝ գիշերը դիակների միջից դուրս սողոսկելով: Զավակին կրծքին սեղմած՝ դաշունահար թևով նա հևասպառ փախել է անապատով և, հասնելով արաբաբնակ գյուղ, ուժահատ փլվել ճանապարհի եզրին:

Վահե Հայկի պատմվածքներում առկա է երախտագիտության զգացում այն արաբների հանդեպ, ովքեր մահից փրկել են հայ որբերի՝ խնամքի տակ վերցնելով նրանց: Հայ մայրը, գյուղ չհասած, նկատում է արաբ կանանց, ովքեր ուտելիք և ջուր են տալիս իրենց, և ավանդում հոգին: Հաջորդ օրը երեխայի լացի վրա արաբները գտնում են նրանց և երեխային գյուղ տանում: Արամը դառնում է խաշնարած Ալի՝ իր նման բազմաթիվ հայ որբերի պես, և այդպես հինգ-վեց տարի, մինչև որ Հալեպում և Բեյրութում գործող Հայ բարեգործական միության գործիչների կողմից հայտնաբերվում և տեղափոխվում է որբանոց: Ռուբեն Հերյանը շրջում է գյուղեգյուղ, վրանից վրան, հավաքագրում հայ որբերին, տեղ կանգնում նրանց ճակատագրին՝ առատորեն վարձատրելով խնամարկու արաբներին: Հուզիչ է նկարագրված որբի ինքնության բացահայտման պահը. «- Կը յիշէ՞ս որ օր մը մայրիկդ քեզ գրկելով մեծ բազմութեան մը հետ քալեց երկա՛ր, երկա՛ր ճամբաներ... անօթի, ծարաւ մնացիք, դուն լացիր...աղաչեցիր... Մայրիկդ քեզ գրկելով փախաւ հոս հասաք...»

Բոլորին պատմությունն ալ գրեթե այսպես էր....

- Դուն հա՛յ ես... անունդ Սարգի՞ս է, Արա՞մ է...

Ալին մեկէն փղձկեցաւ եւ բարձրաձայն լաց մը ձգեց...

Նահատակ մայրիկին անթեղած կայծը անոր մատաղ սրտին մեջ բռնկած էր եւ հրդեհի մը վերածուած:

Անապատի Ռուբենը շահած էր եւ Ալին՝ փրկուած»¹:

Ցեղասպանության և բռնագաղթի ժամանակ հարազատների կորուստի և վերագտնման թեմայով առանձնանում է նաև «Երկու մայր, մեկ զաւակ» պատմվածքը: Արամը տարիներ շարունակ մորը փնտրելու հետքերով Խորհրդային Հայաստանից գնում է Պոլիս և վերագտնում նրան ծերանոցում: Ցեղասպանության օրերի ուշագրավ պատմվածքներից են նաև «Վանքն ու վանահայրը», «Պատանի Կարոն»: Բռնագաղթից առաջ փոքրիկ Կարոն սպանում է իրենց տուն խուժած չեթեններին, ովքեր փորձում էին բռնաբարել իր երկու փոքրիկ քույրերին, և մոր ու քույրերի հետ միանում աքսորի տարվող համազրուդացիներին: Հերոսական դիմադրության մի այլ պատմություն է «Վանքն ու վանահայրը»: Վանահոր հերոսական կեցվածքի և խոհեմության շնորհիվ փրկվում են վանքն ու հոգևորականները:

Վ. Հայկի «Հայրենի ծխանը» գեղարվեստական մեծ նվաճում է՝ ստեղծված ճշմարիտ ներշնչումով: Այդ անկեղծ ոգեշնչումն առկա է նաև Խորհրդային

¹ **Հայկ Վ.**, *Հայրենի ծխան*, հ. Ե, Բեյրութ, 1970, տպ. Տոնիկեան, էջ 35:

Հայաստան ուխտագնացությունների առթիվ գրված քնարական պատկերներում, ինչպես՝ «Նուիրական այցը», «Դո՛ւք, սրբութիւնք հայրենի»։ Ինչի մասին էլ գրում է Վ. Հայկը, գրում է խոր հուզականությամբ, գեղարվեստական բարձր ճաշակով, մեղմ ու հանդարտ պատումով, սրտահույզ տրամադրությամբ։ «Հայրենի ծխանը»՝ իր հինգ հատորներով, հիրավի, հայ արձակի անմոռանալի արժեքներից է։

Գրականություն

1. Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. Ա., Ֆրեզնո, 1930:
2. Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. Գ., Բոստոն, 1947:
3. Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. Դ., Նյու Յորք, 1954:
4. Հայկ Վ., Հայրենի ծխան, հ. Ե, Բեյրութ, 1970:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը: